10.46991/ai.2022.25.1.033

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՏԱՎՈՒՇ ԲԵՐԴԸ

Բանալի բառեր *– Տավուշ բերդ, Տավուշ գավառ, Ուտի գավառ, Սմբատ Ա, Աշոտ Բ, Ցլիկ Ամրամ, Աբաս Կյուրիկյան, Վանական վարդապետ, Մոլար նոյին, Գրիգոր Ակներցի*

Տավուշ բերդը զարգացած ավատատիրության ժամանակաշրջանի Հայաստանի պաշտպանական համակարգի հզոր ու նշանավոր ամրություններից է: Ի տարբերություն իր ժամանակ կառուցված շատ այլ բերդերի և ամրոցների՝ նրա տեղադրությունը վստահաբար հայտնի է: Գտնվում է Տավուշի մարզի Բերդ քաղաքի հարավարևելյան կողմում: Տավուշի միջնաբերդը զբաղեցնում է համանուն գետի արևելյան ափին վեր խոյացող քարաժայռի գագաթը: Միջնաբերդի և ստորին պարիսպների հյուսիսային որոշ հատվածներ դեռևս պահպանվում են: Սակայն, ցավոք, միջնաբերդի պարիսպների քայքայումը վերջին տարիներին արագանում է և աստիճանաբար սպառնալից բնույթ կրում:

Խնդրո առարկա ամրության մասին պատմիչներից առաջինը հիշատակել է Հովհաննես Դրասխանակերտցին՝ իբրև «զամրոցն Տաւըշոյ»[1]: Հետագա սկզբնաղբյուրներում Տավուշը վկայվում է թե՛ իբրև ամրոց, թե՛ որպես բերդ և անգամ՝ դղյակ: Նրա անվան ծագումը ճշգրտելուն նպաստում են պատմիչի ոչ միայն վերոբերյալ, այլև «ձորն Տաւըշոյ»[2] հաղորդումները: Քանի որ Տավուշ գավառը ներառել է ոչ թե մեկ, այլ երեք ձոր, որոնցով հոսում են Ախնջի, Տավուշ և Հախում գետերը, տրամաբանական է ենթադրել, որ պատմիչը նկատի է ունեցել Տավուշ գետի և ոչ թե գավառի ձորը: Եթե այս վարկածը համապատասխանում է իրականությանը, կարելի է ընդունել այն տեսակետը, որ Տավուշ բերդն անվանակոչվել է ոչ թե գավառի, այլ ժամանակին գավառի անունը ստացած գետի անունով:

Տավուշ բերդի շինության ժամանակը և կառուցողի անունը հայտնի չեն: Այդուհանդերձ, Հովհաննես Դրասխանակերտցու մատուցած տվյալները թույլ են տալիս ճշգրտելու դրանք: Անդրադառնալով 850 թ. սկսված հակաարաբական հուժկու ապստամբությունը ճնշելու նպատակով 852 թ. մեծ զորքով Հայաստան ուղարկված Բուղա զորավարի գործողություններին՝ պատ-

[1] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 321 (այսուհետև՝ **Հովհաննես Դրասխանակերտցի**):

[2] Նույն տեղում, էջ 321:

միչը մասնավորապես գրում է, որ նա «երթեալ ըմբռնէ զմեծ իշխանն Ատրներսեհ, որ բնակեալ էր յամրոցին Խաչենուոյ և զայլ ևս զհամազգիս նորա։ Եւ անտի չուեալ գնայ ի գաւառն Գարդմանայ՝ և պատնէշ և պաշարումն շուրջ Գարդման բերդիւն եդեալ ըմբռնէ անդի և զիշխանն Գարդմանայ զԿտրիճն ի կալանս կապանաց արկեալ։ Եւ անտի ևս չուեալ յՈւտի գաւառ՝ ձերբակալ ի Տուս գիւղ առնէ զՍտեփաննոս, որում և Կոն անուանէին զնա»[1]։ Ստեփանոս Կոնի ձերբակալությունը փաստում է նաև նրան «զիշխանն Սեւորդեաց» կոչած Ասողիկ պատմիչը [2]։

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն համապատասխանաբար Խաչեն ամրոցին և Գարդման բերդին ապավինած Ատրներսեհ ու Կտրիճ իշխանների, Ստեփանոս Կոնը գտնվել է անպաշտպան Տուս գյուղում, որն ակնհայտորեն եղել է նրա իշխանանիստը։ Տուսը Բերդ համայնքի Տավուշ գյուղն է, որը գտնվում է Տավուշ բերդից ընդամենը չորս կիլոմետր հեռավորության վրա։ Այս հանգամանքը փաստում է, որ այդ ժամանակ, այն է՝ IX դ. կեսերին, Տավուշ բերդը դեռևս գոյություն չի ունեցել։

Անդրադառնալով Սմբատ Ա-ի (890-914) գործունեությանը՝ Հովհաննես Դրասխանակերտցին ի մասնավորի գրում է, որ նա «առեալ և յինքն ... զՈւտի գաւառ մինչև ի քաղաքն Հունարակերտ և մինչև ի Տուս և ի Շամքոր»[3]։ Դրանից անմիջապես հետո պատմիչն անթվական հիշատակում է Դվինի 893 թ. ահեղ երկրաշարժը՝ բավարարվելով «զայսու ժամանակաւ»[4] նշումով։ Դրանից հետևում է, որ մասնավորապես Ուտի գավառում Սմբատ Ա-ի գործողությունները տեղի են ունեցել այդ երկրաշարժից քիչ առաջ։ Հովհաննես Դրասխանակերտցին, Ուտի գավառ ասելով, հետին թվով նկատի է ունեցել ամենայն հավանականությամբ 915/916 թ. ստեղծված արքունապատկան վարչամիավորը։ Այն ընդգրկել է Ուտիքի Տավուշ և Աղուէ, ինչպես նաև Գուգարքի Ձորոփոր գավառները[5]։ Պատմիչի կողմից այս անգամ ևս Տուսի հիշատակումը, իսկ Տավուշի լռության մատնումն անուղղակիորեն փաստում են, որ նաև այդ ժամանակ, առնվազն մինչև Դվինի վերոհիշյալ երկրաշարժը, Տավուշ բերդը դեռևս կառուցված չի եղել։

Տավուշ բերդի 921 թ. գոյություն ունենալը և դրան նախորդած տասնամյակում երկրի ծայրահեղ ծանր վիճակը թույլ են տալիս վստահորեն պնդել, որ այն կառուցել է Սմբատ Ա-ն IX դ. վերջին տասնամյակի կեսերից X դ. առաջին տասնամյակի վերջերն ընկած ժամանակահատվածում, երբ երկրի

---

[1] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 127։

[2] Մատենագիրք Հայոց, ԺԵ հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, երկու գրքով, գիրք Բ, Երևան, 2011, էջ 708։

[3] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 161։

[4] Նույն տեղում, էջ 162։

[5] Տե՛ս **Շահնազարյան Ա.**, Ուտի գավառը // «Բանբեր հայագիտության» (այսուհետև՝ «Բ Հ»), 2020, թիվ 2, էջ 28։

վիճակը համեմատաբար բարվոք էր։ Այսպիսով, այդ բերդի կառուցապատման համար պահանջվել է շուրջ 15 տարի։ Խնդրո առարկա ամրությունը հնագիտորեն առաջինը հետազոտած Հ. Եսայանն իր հերթին նրա երրորդ շինարարական հորիզոնը թվագրել է IX-X դարերով[1], ինչը չի հակասում տոդերիս հեղինակի առաջարկած թվագրությանը։

Տավուշ բերդի կառուցմամբ Սմբատ Ա-ն նպատակ է ունեցել ամրապնդել իր իշխանությունը Հովհաննես Դրասխանակերտցու բնորոշմամբ «ելուզակուտ»[2] բնակչությամբ Ուտի գավառում և հզորացնել Հայաստանի հյուսիսային սահմանների պաշտպանական համակարգը։

Հովհաննես Դրասխանակերտցին այդ բերդը հիշատակել է Աշոտ Բ-ի (914-928) դեմ Ցլիկ Ամրամի 921 թ. բարձրացրած ապստամբության առիթով։ Վերջինիս Աշոտն «էր կացուցեալ... հրամանատար ի վերայ գործոյ աշխարհին»[3], այսինքն՝ Ուտի գավառի կառավարիչ։ Այն, որ իբրև այդպիսին Ցլիկ Ամրամը պետք է ամրակուռ նստավայր ունենար, կասկածից վեր է։ Սակայն պատմիչը դրա անունը չի տալիս բավարարվելով հիշատակությամբ առ այն, որ Ցլիկ Ամրամը, պատրաստվելով ապստամբության, «առձեռն պատրաստ զամրոցն Տաւըշոյ առեալ՝ ի նմա ամրապահեստ առնէր զընտանիս տուն իւրոյ»[4]։

Պատմիչի հաղորդածի անորոշությունը հնարավորություն չի ընձեռում միանշանակ պատասխան տալու Տավուշ բերդը Ցլիկ Ամրամի նստավայրը լինելու կամ չլինելու հարցին։ Կա երկու տարբերակ։ Չի բացառվում, որ Հովհաննես Դրասխանակետցին «առեալ» բառն օգտագործել է նրա ոչ թե «գրավել», այլ մյուս՝ «հափշտակել» իմաստով[5]։ Այն է՝ նա Ցլիկ Ամրամի կողմից նրա գերակա Աշոտ Բ-ին դավաճանելը, վերջինիս պատկանող բերդը միանձնյա տնօրինելը հափշտակություն, այլ ոչ թե գրավում է որակել։ Նաև հնարավոր է, որ Ցլիկ Ամրամի նստավայրն այլ ամրություն է եղել, սակայն Տավուշի պարիսպների ամրությանը վստահելով՝ նա իր ընտանիքն այդտեղ է փոխադրել։ Իրականությանն ավելի մոտ է առաջին տարբերակը, բայց ոչ անվարան պնդելի, ինչպես վարվել է Ռ. Մաթևոսյանը։ Ըստ նրա՝ Ուտիի «գավառապետի նստավայրը Տավուշ բերդն էր, նրանցից հանվանե Դրասխանակերտցին հիշատակում է Մովսեսին և Ցլիկ Ամրամին»[6]։

Չնայած Հովհաննես Դրասխանակերտցու լռությանը՝ Ցլիկ Ամրամի ապստամբությունը ձախողվեց, և Ուտի վարչամիավորը նրա տարածքում

---

[1] Տե՛ս **Եսայան Հ., Սաղումյան Ս., Շահնազարյան Ա.**, Տավուշ ամրոցի պեղումները // «ԼՀԳ», 1991, թիվ 2, էջ 132։

[2] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 140։

[3] Նույն տեղում, էջ 320։

[4] Նույն տեղում, էջ 321։

[5] Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. առաջին, ի Վենետիկ, 1836, էջ 309։

[6] **Մաթևոսյան Ռ. Ի.**, Տաշիր-Զորագետ (X դ.-XII դ. սկիզբ), Երևան, 1982, էջ 54։

գտնվող բերդերով, այդ թվում Տավուշով հանդերձ, շարունակեց մնալ արքունապատկան: Սակայն, ի տարբերություն Աղուէի ու Զորոփորի, Տավուշ գավառն ու բերդը հետագայում չընդգրկվեցին Բագրատունիների կրտսեր ճյուղերից Կյուրիկյանների 981 թ. ստեղծած թագավորության կազմում: Դրանք շարունակում էին պատկանել այդ տոհմի ավագ Անիի ճյուղին: Այդ են փաստում տարբեր սկզբնաղբյուրներ[1], որոնց հաղորդումների նույնականությունը բացառում է հակառակը պնդելու հնարավորությունը: Ուստի Տավուշ գավառը, հետևաբար նաև բերդը, դեռևս 966 թ. Կյուրիկյաններին տրվելու Ռ. Մաթևոսյանի կարծիքը[2] սկզբնաղբյուրներով չի հիմնավորվում: Ընդհակառակը, Վարդան վարդապետը Գագիկ Ա-ից (990-1020) հետո Հովհաննես-Սմբատին (1020-1041) անցած գավառների թվում հիշատակում է նաև Տավուշը[3]:

Ըստ Տավուշ բերդի 1988 թ. պեղումների ժամանակ հայտնաբերված մի հնգատող արձանագրության՝ ստորին բերդում 1019 թ. կառուցվել է Սուրբ Աստվածածին անունը կրող եկեղեցի, որի մնացորդները պահպանվել են:

Խնդրո առարկա բերդը Տավուշ գավառի հետ 1045 թ.՝ Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո, ընկավ Բյուզանդիայի տիրապետության տակ[4]: Հյուսիսային Հայաստանում վրաց արքա Դավիթ IV Շինարարի (1089-1125) նվաճումների առնչությամբ Վարդան վարդապետը գրել է, որ նա գրավել էր «և Գագ, և զՏէրունականն և զՏայուշ և Կյեան, և զԼօռի և զՏաշիր և զՄահկանաբերդ և զբոլոր իշխանութիւն Հայոց Կիւրիկէի և Աբասայ»[5]: Քանի որ սկզբնաղբյուրներում իբրև թագավոր առաջին անգամ 1050 թ. հիշատակվող Կյուրիկե Ա-ի կողմից Տավուշ գավառին ուժով տիրելու հնարավորությունը բացառվում էր, ինքնին հասկանալի է, որ նա այն Տավուշ բերդով հանդերձ ստացել էր Բյուզանդիայից: Դա պայմանավորված էր Տաշիր-Զորագետի թագավորությունը Բյուզանդիայի քաղաքական ազդեցության ոլորտում հայտնվելով: Բերդ համայնքի Արծվաբերդ գյուղում 2020 թ.

---

[1] Տե՛ս Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, ի Վենետիկ, 1862, էջ 90 (այսուհետև՝ **Վարդան վարդապետ**), Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 300 (այսուհետև՝ **Ստեփանոս Օրբելյան**), Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 384:

[2] Տե՛ս **Մաթևոսյան Ռ. Ի.**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, էջ 136:

[3] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 92:

[4] Ռ. Մաթևոսյանը, հղելով Վարդան վարդապետի վերը նշված աշխատության վենետիկյան հրատարակության 99-րդ էջը, գրել է, որ Գրիգոր Մագիստրոսը 1045 թ. հետո՝ Միջագետք մեկնելուց առաջ, իր տիրույթների հետ նաև Աղստևի հովիտն ու Տավուշն է հանձնել Բյուզանդիային (տե՛ս **Մաթևոսյան Ռ. Ի.**, Տաշիր-Զորագետ (X դ.-XII դ. սկիզբ), էջ 127): Սակայն այդ էջում Վարդան վարդապետը գրում է միայն Աղստևի հովտում գտնվող Կայանն ու Կայծանը, ինչպես նաև Բջնին նրա կողմից Բյուզանդիային հանձնվելու մասին:

[5] **Վարդան վարդապետ**, էջ 119:

հայտնաբերված՝ բյուզանդական կայսր Կոստանդին X Դուկասի (1059-1067) դրամը դրա ապացույցն է։

Շատ չանցած՝ 1088 թ., Կյուրիկե Ա-ն ստիպված էր հպատակվել սելջուկներին և դառնալ Գանձակի սելջուկյան մալիքության անմիջական հպատակը։ Դրանից հետո Տաշիր-Զորագետի թագավորությունը, տարածքային կորուստներ կրելով, զրկվեց նաև Տավուշ գավառից ու բերդից, որոնք անցան այդ մալիքությանը։ Մյուս կողմից այդ թագավորության վրա աստիճանաբար ուժեղանում էր նաև վրացական ճնշումը։

Ի վերջո, ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Կյուրիկե Ա-ից հետո նրա որդիներ Աբասն ու Դավիթը «դաւեալք ի վրաց, ելեալք ի տանէ հայրենեաց, գնացին ի պարսիկս... և առնուն ի նոցանէ ի ժառանգութիւն զՏաւուշ, զՄածնաբերդ և զայլ տեղիս»[1]։ «Ի պարսիկս» արտահայտությամբ պատմիչը նկատի ունի Գանձակի սելջուկյան մալիքությունը։ Այսպիսով, վստահաբար Տավուշ ու Մածնաբերդ բերդերը 1113 թ. իրենց շրջակայքով անցան համապատասխանաբար Աբաս և Դավիթ Կյուրիկյաններին[2]։ Տավուշ բերդը դարձավ իր շրջակայքը ներառող համանուն իշխանության կենտրոնը։

Շատ չանցած, 1124 թ. գարնանն ու ամռանը[3], ինչպես վերը նշվեց, Դավիթ IV Շինարարը Հյուսիսային Հայաստանում կատարեց մի շարք նվաճումներ։ Արդյունքում Տաշիր-Զորագետի Կյուրիկյան նախկին թագավորության տարածքը նա խլեց սելջուկներից։ Արդեն տեսանք, որ ըստ Վարդան վարդապետի՝ վրաց թագավորի գրված բերդերի թվում էր նաև Տավուշն իր շրջակայքով։ Դա հավաստում է նաև Ստեփանոս Օրբելյանը[4]։ Սակայն Առանի կառավարիչ (աթաբեկ) Կարա-Սոնկարը (1127-1140/1141), չհամակերպվելով Դավիթ IV Շինարարի գրված տարածքները կորցնելու հետ, նրա հաջորդ Դեմետրե Ա-ի (1125-1155/1156) դեմ պայքար սկսեց դրանք վերադաձնելու համար։ Փոփոխական հաջողություններով ընթացած այդ պայքարն ավարտվեց 1130-ական թվականների վերջերին՝ Կարա-Սոնկարի հաղթանակով։ Այսպիսով, Տավուշի Կյուրիկյան իշխանությունը Տավուշ բերդով հայտնվեց Գանձակի սելջուկյան մալիքության գերակայության տակ։

Այդ ժամանակաշրջանում Տավուշ բերդում Հայ Աղվանից եկեղեցու գործունեության ասպարեզում տեղի ունեցավ մի կարևոր իրադարձություն։ Այնտեղ 1139 թ. տրէ ամսին (մայիսի 15-հունիսի 11) կայացավ ժողով, որի որոշմամբ այդ եկեղեցու ութ տարի թափուր մնացած կաթողիկոսական

---

[1] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 151-152 (այսուհետև՝ **Կիրակոս Գանձակեցի**)։

[2] Թվականի ճշտումը տե՛ս **Շահնազարեան Ա.**, Տաշիր-Զորագետի Կիւրիկեան թագաւորութեան ճգնաժամն ու անկումը // «Հանդէս ամսօրեայ», 2004, թիվ 1-12, սյունակ 297։

[3] Տե՛ս **Մարգարյան Հ. Գ.**, Հյուսիսային Հայաստանի ու Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 90-92։

[4] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 379։

աթոռը զբաղեցրեց Գրիգորիս Բ-ն (1139-1145)։ Ժողովը գլխավորում էր Հայոց Արևելից կողմանց երևելի վարդապետներ Դավիթ Ալավկաորդու, Թոքակերի որդի Գրիգորի և այլոց խնդրանքով Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու (1113-1165) կողմից այնտեղ ուղարկված Կարինի եպիկոսպոս Սահակը։ Այս իրադարձությանն անդրադարձած, բայց ժողովի կայացման տեղն ու ժամանակը չնշած Կիրակոս Գանձակեցուն լրացնում է Մխիթար Գոշը։ Ըստ նրա՝ «Ի ՇՁԸ թուակ. Հայոց (1139 թ. – *Ա. Շ.*) ի գալ տէր Սահակայ յաշխարհս Աղուանից, ժողովէր զամենեսեան առ հասարակ ի տուն թագաւորին Աբասայ Բագրատունւոյ՝ որդւոյ Կիւրիկէի արքայի, որ եւ ժողովեալ ամենեցուն առաջին նորա ի բերդն, որ կոչի Տաւուշ ուր եւ ժողովեալ հարանց սրբոց եւ եպիսկոսաց. թագաւորն Դաւիթ՝ եղբայր Աբասայ թագաւորի»[1]։

Ժողովից քիչ անց՝ 1139 թ. արեգ ամսին (սեպտեմբերի 13-հոկտեմբերի 10), տեղի ունեցավ Գանձակի ուժգին երկրաշարժը, որը պատուհասեց նաև Տավուշ գավառը։ Ավերվեց նաև Տավուշ բերդի վերը հիշատակված Սուրբ Աստվածածին եկեղեցին։ Այն ի հիշատակ իր և Դավիթ եղբոր հոգու Աբասը նախքան 1144 թ. նորոգեց[2]։

Օգտվելով Կարա-Սոնկուրից հետո նրա տնօրինած շրջանների խառնակ ու անտերունչ վիճակից՝ Պարսկաստանից եկած Չավլի զորապետը սկսեց ասպատակել դրանք։ Նա մի շարք վայրեր, այդ թվում Խաչենը 1143 թ. ասպատակելուց հետո, ըստ Մխիթար Գոշի՝ «ի միուսում ամին դարձեալ գայր ի գաւառս Առանայ։ Եւ փութանակի երթայր ի բերդն Տաւուշ յորում ամրացեալ էր թագաւորն Աբաս, և բազում ջանիւ ընդ երկար պաշարեալ զնա՝ ապա առնոյր զբերդն. իսկ Աբաս անցեալ գնաց առ թագաւորն Վրաց ի ՇՂԴ թուականին»[3]։ Այսպիսով, ըստ Մխիթար Գոշի՝ Չավլին Տավուշը գրավել է 1144 թ.՝ երկարատև պաշարումից հետո։ Այս իրադարձությանն անդրադարձել է նաև Սամվել Անեցին։ Սակայն նա Տավուշի գրավումը թվագրել է 1145 թվականով, նաև նշել, որ դա տեղի է ունեցել քառասնօրյա պաշարումից հետո[4]։ Դեպքերի հետագա զարգացումից հետևում է, որ ճիշտ է Մխիթար Գոշի առաջարկած թվականը[5]։ Չավլին Տավուշը գրավեց՝ «հանելով զթագաւորն Աբաս առանց վնաս առնելոյ»[6], և նա ապաստանեց Մածնաբերդում՝ Դավիթ եղբոր մոտ[7]։

---

[1] **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 351 (այսուհետև՝ **Մովսէս Կաղանկատուացի**)։

[2] Տե՛ս **Եսայան Հ., Սաղումյան Ս., Շահնազարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 136-140։

[3] **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 353։

[4] Տե՛ս **Սամուէլ Անեցի և շարունակողներ**, Ժամանակագրություն, աշխատասիրությամբ Կարեն Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 213 (այսուհետև՝ **Սամվել Անեցի և շարունակողներ**)։

[5] Չավլիի կողմից Տավուշ բերդի գրավման թվականի ճշգրտումը տե՛ս **Շահնազարյան Ա.**, Տավուշի Կյուրիկյան իշխանությունների պատմությունից // «Էջմիածին», 2017, թիվ Ժ, էջ 110-111։

[6] **Սամվել Անեցի և շարունակողներ**, էջ 213։

[7] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 152։

Գրիգոր Ակներցու «զամուր դղեկն զՏաւուշ, որ էր աթոռ Սուլթանի»[1] վկայությունից հետևում է, որ այդ բերդի գրավումից հետո Աբաս Կյուրիկյանի իշխանությունը վերացվեց, և նրա տեղում ստեղծվեց սելջուկյան սուլթանություն՝ իր տիրոջ նստավայր ունենալով Տավուշ բերդը: Այդ վարչական միավորը գոյություն ունեցավ մինչև 1203 թ., երբ ըստ «Վասն անցեալ աւուրցն» խորագրով ժամանակագրական մանր հատվածի[2]՝ Տավուշ բերդն ազատագրվեց Զաքարյանների կրտսեր ճյուղը ներկայացնող իշխան Բլուզ Զաքարե Վահրամյանի կողմից:

Այսպիսով Տավուշ բերդը և գավառն ընգրկվեցին վրացական թագավորության կազմում գտնվող Վահրամյանների հզոր իշխանության մեջ:

Դեռևս Բագրատունյաց շրջանում նկատելի էր բերդն իր շրջակա տարածքով գավառ կոչվող վարչամիավոր կազմելու և այն դրա կենտրոն դարձնելու սկզբունքը[3]: Հաղբատի վանական համալիրում իր վաղամեռիկ եղբայրների հիշատակին Բլուզ Զաքարեի տիկին Խաթուն իշխանուհու կառուցված եկեղեցու պատին նրա թողած 1205/1206-1215/1216 միջակայքով թվագրվող արձանագրությունից հետևում է, որ այդ ժամանակ ևս նույն սկզբունքն էր գործում: Խաթունը դրանում ամուսնուն ներկայացնում է որպես «տէր Գագա եւ Տաւշո, Գարդմանա եւ Տէրունականին եւ այլոց գաւառաց»[4]:

Այս պնդման օգտին է վկայում նաև Խորանաշատի վանքում 1252 թ. գրչագրված մի ձեռագրի հիշատակարանում առկա «ի գաւառիս Երգեւանք կոչեցեալ»[5] արտահայտությունը: Թե՛ Տավուշ և թե՛ Երգեվանք բերդերն ընդգրկված էին աշխարհացույցյան Տավուշ գավառում, բայց, ինչպես տեսնում ենք, XIII դ. հանդես են գալիս իբրև դրա տարածքի վրա ստեղծված՝ իրենց անունը կրող գավառի կենտրոններ: Չի բացառվում, որ Տավուշ բերդը Վահրամյանների ենթակայության տակ անցնելուց հետո դարձել է նրանց կողմից ստեղծված և նախկին Տավուշի Կյուրիկյան իշխանության տարածքին համապատասխանող վարչամիավորի կենտրոնը: Տավուշ բերդը կրող քառաժայռի արևմտյան ճակատին պահպանվել է մի տառաշարք՝ «ՈԾԴԹ»[6]: Այն սելջուկյան տիրապետությունից խնդրո առարկա բերդի ազատագրման տարեթիվն է՝ 1205: Տավուշ բերդի Սուրբ Աստվածածին եկեղեցին հիշատակած վերոհիշյալ արձանագրության նման՝ այն փրկչական թվականով է: Իսկ

---

[1] **Գրիգոր Ակներցի**, Պատմութիւն թաթարաց, Երուսաղէմ, 1974, էջ 23 (այսուհետև՝ **Գրիգոր Ակներցի**):

[2] Տե՛ս Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., էջ 392:

[3] Տե՛ս **Շահնազարյան Ա.**, Վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990, էջ 133:

[4] Դիվան հայ վիմագրության, պրակ IX, կազմեցին Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Սաղումյան, Երևան, 2012, էջ 208:

[5] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 264:

[6] **Ղաֆադարյան Կ.**, Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, I, Երևան, 2007, էջ 304:

ինչպես հայտնի է՝ դրա համաձայն Քրիստոսի ծնունդը հաշվվում է այժմ գործող թվականից երկու տարի առաջ: 1205 թվականից ավելդիր երկու տարին հանելով ստանում ենք 1203 թ.: Ինչպես արդեն տեսանք, այդ թվականը՝ 1203-ը, տալիս է նաև «Վասն անցեալ աւուրցն» խորագրով վերոբերյալ ժամանակագրական մանր հատվածը:

1203-1229 թթ. Տավուշ բերդը սկզբնաղբյուրներում չի հիշատակվում: Այն չի նշվում նաև 1229 թ. գարուն-ամռանը խորեմշահ Ջալալ ադ-Դինի (1220-1231) կողմից Վահրամյանների իշխանության վրա կատարած պատժիչ արշավանքի ժամանակ պաշարված բերդերի թվում[1]: Եվ դա այն դեպքում, երբ նրա հրոսակները ներխուժել էին նաև Տավուշ գավառ և ավերել Խորանաշատի վանքը[2]: Դրանից հետո Վանական վարդապետն իր սաների հետ նախ ապաստանել էր Տավուշ բերդի հարավակողմում ընկած Լորուտ գյուղի մոտ գտնվող մի քարայրում, ապա դրա մերձակայքում: Դա ևս անուղղակիորեն փաստում է, որ Ջալալ ադ-Դինի հրոսակները Տավուշ բերդ կամ նրա շրջակայք չէին հասել:

Խնդրո առարկա բերդն իր պատմության մեջ երկրորդ և վերջին անգամ պաշարվեց 1236 թ.: Այդ թվականին նվաճման նպատակով հյուսիսարևելյան Հայաստան ներխուժած մոնղոլական բանակի մի ջոկատ զորապետ Մոլար նոյինի գլխավորությամբ մտավ Վահրամյանների իշխանության տարածք: Վրաց արքունիքից օգնություն չստացած նրա իշխան Վահրամ Գագեցին, համոզվելով, որ սեփական ուժերով մոնղոլներին չի կարող հետ մղել, Աղբուղա որդու հետ տեղից տեղ էր փախչում[3], մինչև որ ապաստանեց Քութահիսում[4]: Դրա հետևանքով նրա իշխանության «ամրոցս, և զգեռոս և զազարակս ամենեքեան տուեալ լինէին ի ձեռս նոցա (մոնղոլների – *Ա. Շ.*) ի սուղ ժամանակս, անվաստակ և առանց աշխատութեան»[5]: Ինչ վերաբերում է Տավուշ բերդին, ապա այն առանց դիմադրության չէ, որ հանձնվեց: Այդ մասին է վկայում Գրիգոր Ակներցին: Ըստ նրա՝ մոնղոլներն «առին եւ գործով զամուր դղեկն Տաւուշ»[6]: Ինչպես տեսնում ենք, Տավուշ բերդն այս անգամ ևս գրավվեց համառ դիմադրությունից հետո միայն: Մոնղոլների կողմից այդ բերդին մերձակա Վանականի քարայրը 1236 թ. վարդավառի օրը՝ հուլիսի 6-ին, պաշարելը[7] հուշում է, որ այն գրավվել է դրանից քիչ առաջ կամ հետո:

Մոնղոլները ռազմական գործողություններն ավարտելուց հետո՝ 1236 թ. աշնանը, վերադարձան Մուղան՝ իրենց ձմեռանոց: Նախքան այդ նրանք Ղա-

---

[1] Տե՛ս **Шихаб ад-Дин Мухаммад ан-Насиви**, Жизнеописание султана Джалал ад-Дин Манкбурны, Баку, 1973, с 226□

[2] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 244:

[3] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 145:

[4] Տե՛ս Картлис цховреба, История Грузии, под. ред. Р. Метревели, Тбилиси, 2008, с. 346□

[5] **Վարդան վարդապետ**, էջ 145:

[6] **Գրիգոր Ակներցի**, էջ 23:

[7] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 245:

րա Բուղա անունով մի զորապետի թողեցին տեղում՝ հանձնարարելով «քակել զամենայն ամուրս երկրին զոր առեալ էին, զոր և քակեցին ի հիմանց զանառիկ բերդսն»[1]: Չնայած նրանք իրենց գրված բոլոր բերդերն ու ամրոցները չէ, որ քանդեցին, սկզբնաղբյուրներում հետագայում Տավուշ բերդի հիշատակությունների չգոյությունը և մոնղոլներին դիմադրած լինելը հիմք են տալիս կարծելու, որ այն նրանց կողմից ավերվել է: Դա են վկայում նաև այդ բերդի 1986-1988 թթ. շերտագրական պեղումների արդյունքները[2]: Այսպիսով, անտարակուսելի է, որ Տավուշ բերդի գոյության ժամանակագրական սահմանները ներառում են IX դ. վերջին տասնամյակի կեսերից մինչև XIII դ. չորրորդ տասնամյակի երկրորդ կեսն ընկած միջակայքը: Հետևաբար, այն գոյություն է ունեցել շուրջ երեքուկես դար:

Արտաշես Շահնազարյան – *Տավուշ բերդը*

Տավուշը միջնադարյան Հայաստանի հզոր ու նշանավոր բերդերից է, որը գտնվում է Տավուշի մարզի Բերդ քաղաքի հարավարևելյան կողմում: Այն վստահաբար կառուցվել է Սմբատ Ա-ի կողմից՝ IX դ. վերջին տասնամյակի կեսերից X դ. առաջին տասնամյակի վերջերն ընկած ժամանակամիջոցում: Տավուշ բերդի կառուցմամբ Ամբատ Ա-ն երկու նպատակ է ունեցել: Նախ ամրապնդել Հայաստանի հյուսիսային սահմանների պաշտպանությունը և ապա անհնազանդ Տավուշ գավառը պահել արքունիքի անմիջական հսկողության տակ: Առաջին անգամ հիշատակվում է Աշոտ Բ Երկաթի դեմ Ուտի վարչական միավորի կառավարիչ Ցլիկ Ամրամի 921 թ. ապստամբության կապակցությամբ: Տավուշ բերդը մինչև 1045 թ. պատկանել է Բագրատունիներին: Դրանից հետո հաջորդաբար անցել է Բյուզանդիային, Կյուրիկյաններին, սելջուկներին ու Վահրամյաններին: Այդ ընթացքում եղել է Տավուշ գետի ավազանում ստեղծված Կյուրիկյան համանուն իշխանության, սելջուկյան սուլթանության, իսկ Վահրամյանների օրոք՝ Տավուշ գավառ վարչական միավորի կենտրոնը: Մոնղոլները 1236 թ. այն գրավել և ավերել են:

Арташес Шахназарян – *Крепость Тавуш*

Ключевые слова *– крепость Тавуш, провинция Тавуш, провинция Ути, Смбат I, Ашот II, Цлик Амрам, Абас Кюрикян, вардапет Ванакан, Молар-ноин*

Тавуш являлся одной из мощно укрепленных и значительных крепостей средневековой Армении. Крепость находилась в юго-восточной части г. Берд Тавушской области. Она была построена Смбатом I в середине последнего десятилетия IX – конце первого десятилетия X в. Стрительство крепости Тавуш преследовало две цели. Во-первых, Смбат I хотел укрепить оборону северных границ Армении, во-вторых, держать непокорную провинцию Тавуш под непосредственным контролем царского двора.

---

[1] Տե՛ս **Գրիգոր Ակներցի**, էջ 23-24:

[2] Տե՛ս **Եսայան Հ. Ս., Սաղումյան Ս. Տ., Շահնազարյան Ա. Ի.**, նշվ. աշխ., էջ 132:

Впервые крепость была упомянута в связи с восстанием правителя административной единицы Ути Цлик Амрама против Ашота II в 921 г. До 1045 г. крепость принадлежала царскому роду Багратуни, впоследствии она поочередно переходила к Византии, Кюрикянам, сельджукам и Ваграмянам. В этот период крепость Тавуш была центром созданного в бассейне реки Тавуш одноименного княжества Кюрикянов, сельджукского султаната, а при Ваграмянах – центром административной единицы провинции Тавуш. Тавушская крепость была разрушена в 1263 г. в результате захвата монголами.

Artashes Shahnazaryan – *Tavush Fortress*

Key Words *– Ashot II Yerkat, Tslik Amram, Medieval Armenia, Tavush, fortresses, city, governor, sultanate, protection, borders, revolt*

Tavush is one of the powerful and famous fortresses of medieval Armenia. It is located in the southeastern part of Berd city in Tavush Province. It was most probably built by Smbat I during the period between the middle of the last decade of the IX century and the end of the first decade of the X century. With the construction of Tavush Fortress, Smbat I pursued two goals. Firstly, to strengthen the protection of the northern borders of Armenia, secondly, to keep the disobedient Tavush Province under the direct control of the court. The fortresses was first mentioned in connection with the revolt of Tslik Amram, the governor of the Uti administrative unit, against Ashot II Yerkat in 921. Tavush fortress belonged to the Bagratids until 1045. After that, it passed to Byzantium, the Kyurikids, the Seljuks and the Vahramyans. During that period, it was the center of the administrative unit of the Kyurikid Dynasty established in the Tavush river basin, later that of the Seljuk sultanate, and under the Vahramyans it was the center of the Tavush Province administrative unit. It was captured and destroyed by the Mongols in 1236.

Ներկայացվել է 20.01.2022
Գրախոսվել է 07.03. 2022
Ընդունվել է տպագրության 29.03.2022

Արտաշես Շահնազարյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ (shahnazaryan1974@inbox.ru)